ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Մարտի 14-ին, ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունների օրը, Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ներկայացան իրենց ընտրական տեղամասը՝ քվեարկելու ժողովրդի ընտրելիներին։ Նրանք, որպես Սովետական Միության լիիրավ քաղաքացիներ, իրենց ձայնը միացրին բազմահազար սովետական ազնիվ քաղաքացիների ձայնին՝ քվեարկելով հօգուտ իրենց ցանկացած թեկնածուին։

***

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վերջերս քարոզչական եռանդուն գործունեություն է ծավալել բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը։ Հայր սուրբն իր հուսապնդիչ դեղեցիկ քարոզներով մխիթարում է հավատացյալներին։ Նա ոգևորում, եռանդ է ներշնչում նրանց՝ է՛լ ավելի նվիրվելու Հայ Եկեղեցուն, Հայրենիքին և սրբությամբ պահպանելու Քրիստոսի երկնառաք սրբազան ավանդները։

Բացի Մայր Տաճարից, Մեծ Պահքի օրերին հայր սուրբը քարոզներով հանդես է եկել նաև Երևանի Ս. Սարգիս, Ս. Հովհաննես և Ս. Զորավար եկեղեցիներում։ Ունկընդրող հավատացյալներն ամենուրեք իրենց գոհունակություններն են հայտնում բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանի բովանդակալից քարոզների համար։

***

Մարտի 23-ին Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ գրական հանդես՝ նվիրված Հովհաննես Թումանյանի մահվան 31-րդ տարեդարձին։ Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և դասախոսները։

Հանդեսը սկսվեց «Հայր մեր»ով։

Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանի բացման խոսքից հետո, մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ Ճեմարանի լեզվի ու գրականության դասախոս Ա. Մինասյանը։ Ինքնուրույն ստեղծագործություններով և արտասանություններով հանդես եկան Հոգևոր Ճեմարանի սաներ Հ. Զամչիկյանը, Ա. Բալաբանյանը, Հ. Դանիելյանը, Ֆ. Փիլիպոսյանը, Կ. Բենելյանը, Ռ. Վարդանյանը, Ի. Մելքոնյանը։

Հանդեսն անցավ կազմակերպված ու հաջող՝ հիացում առաջացնելով ունկնդիրների մեջ։

***

Մարտի 24-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր գրական-երաժշտական երեկո՝ նվիրված հայ դասական երաժշտագետ Տիգրան Չուխաջյանի ծննդյան 117-րդ տարեդարձին։ Ներկա էին Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և միաբանության անդամները։

«Տիգրան Չուխաջյանի կյանքն ու գրական գործունեությունը» ընդհանուր զեկուցումով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի երաժշտության դասախոս Հրանտ Գեորգյանը։ Այնուհետև ուսանողները Հրանտ Գեորգյանի ղեկավարությամբ կատարեցին առանձին երաժշտական կտորներ Տիգրան Չուխաջյանի «Կարինե» և «Արշակ Երկրորդ» օպերաներից։

Երեկոն անցավ ջերմ ու խանդավառ մթնոլորտում։